ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 հոկտեմբերի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

133
(3164)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ՝ ԸՆԴԴԵՄ ՔՊ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ



Ազգային ժողովում սկանդալային խոսքերի ու փոխադարձ մեղադրանքների շղթան տեղափոխվել է դատարան: Ընդդիմադիր պատգամավորներ Թագուհի Թովմասյանը եւ Աննա Գրիգորյանը հայցադիմում են ներկայացրել դատարան՝ ընդդեմ ԱԺ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի՝ որպես զրպարտչի:

Երեւանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում Թովմասյանը պահանջում է Արթուր Հովհաննիսյանից հրապարակային ներողություն, զրպարտության հերքում եւ 9 միլիոն դրամի ոչ նյութական վնասի փոխհատուցում. դատավորը Աննա Շիլաջյանն է:

Ինչի՞ց սկսվեց

Հիշեցնենք՝ սեպտեմբերի 8-ին լրագրողների հետ ճեպազրույցում Արթուր Հովհաննիսյանը կոպիտ ու վիրավորական արտահայտություններ էր թույլ տվել ընդդիմադիր գործընկերոջ հասցեին: Իշխող խմբակցության պատգամավորի խոսքերը ոչ միայն քաղաքական դաշտում, այլեւ հանրային լայն շրջանակներում դժգոհություն առաջացրին, եւ բոլորը, բացի ՔՊ-ից, միաբերան դատապարտեցին Արթուր Հովհաննիսյանին:

Պատգամավորը դատարանից պահանջում է պարտավորեցնել Հովհաննիսյանին հրապարակային ներողություն խնդրել վիրավորական խոսքերի համար եւ հերքել, որ Թովմասյանը Հյուսիսային պողոտայում 4 բնակարան չունի, ՔՊ քարտուղարը ստել է:

Արթուր Հովհաննիսյանի դեմ այս տարվա հունիսին դատարան էր դիմել նաեւ ընդդիմադիր պատգամավոր Աննա Գրիգորյանը: Նա էլ պահանջում է հերքել Հովհաննիսյանի՝ մայիսի 12-ի ելույթի ժամանակ արված արտահայտությունը թե՝ «կնայեք Աննա Գրիգորյանի աչքերի մեջ, կտեսնեք ՀԷԿ-երը»: Գրիգորյանը, հերքումից զատ, պահանջում է նաեւ 3 մլն դրամ փոխհատուցում, քանի որ երբեք ՀԷԿ չի ունեցել եւ Արթուր Հովհաննիսյանը զրպարտել է իրեն:

Հիշեցնենք, որ Արթուր Հովհաննիսյանը դատարանի վճռով առաջին անգամ չէ, որ զրպարտիչ է ճանաչվում. «Թիվ 5» լրատվամիջոց, «Ժողովուրդ» օրաթերթ եւ էլի հայցվորներ ընդդեմ Արթուր Հովհաննիսյանի հաղթել են դատարաններում:

Ազգային ժողովի վերջին երկու օրերը կարելի է նկարագրել մեկ բառով՝ «հերթ». ոչ թե օրակարգային հարցերի քննարկման, այլ ընդդիմությանը հերթով վիրավորելու համար: Թվում է՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները գտել են իրենց քաղաքական գոյատեւման բանալին. որքան ավելի կոպիտ խոսեն ընդդիմության հասցեին, կամ գրառում անեն, այնքան բարձր կլինի հաջորդ ընտրացուցակում հայտնվելու հավանականությունը: Հասկանալի է, որ օրենսդրական նախաձեռնությունների քննարկումը նրանց երկրորդ պլանում է, իսկ ամբիոնին մոտենալը՝ քաղաքական կարիերայի ապահովագրություն: Դրա համար էլ անգամ այն պատգամավորները, որոնք մի ամբողջ նախադասություն շարադրելու համար նախապես պետք է գրավոր տեքստ ունենան, այսօր մեկ առ մեկ դուրս են գալիս ու կրկնում նույնը, հիշեցնում «նախկիններին», վարկաբեկում ընդդիմությանը եւ ցույց տալիս՝ «հավատարիմ ենք»: Օրինակ՝ հանրությանը գրեթե ոչինչ չասող անուններ՝ Անուշ Քլոյան, Արմենուհի Ղազարյան, Էմմա Պալյան, Նարեկ Գրիգորյան, Տիգրան Պարսիլյան եւ մյուսներ, որոնց գործունեության մասին ոչ ոք առանձնապես տեղյակ չէր, հիմա փորձ են անում քաղաքական խոսք ձեւակերպել: Ամբիոնից, իհարկե: Այս ամենը, թերեւս, ցույց է տալիս մեկ բան. իշխող խմբակցության ներսում ընդդիմախոսին վիրավորելը դարձել է մրցակցություն, իսկ ԱԺ ամբիոնը՝ հերթագրման ցուցակ: Մնում է պարզել՝ արդյոք այս քաղաքական մարաթոնում վերջնագիծ կա, թե ամբիոնից հնչող վիրավորանքների հաշվին են փորձելու անցկացնել ամբողջ խորհրդարանական շրջանը:

Հայաստանի կաթնամթերքի շուկան, կարծես, հայտնվել է խոցելի վիճակում: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական հարցումների հիման վրա պարզեց՝ Իրանից զանգվածաբար ներմուծվում է ծագումով անհասկանալի սերուցք, որը, ըստ ոլորտի մասնագետների, առանց պատշաճ վերահսկողության դառնում է տարբեր կաթնամթերքի հիմք՝ կարագից մինչեւ պաղպաղակ՝ «տեղական արտադրության» պիտակով: «Ժողովուրդ» օրաթերթին ՊԵԿ-ից պաշտոնապես հայտնեցին, որ ներմուծումներ կատարվել են մի շարք ընկերությունների կողմից: Որպեսզի հնարավոր լինի պատկերացնել, թե ինչ ծավալների մասին է խոսքը, ապա կրկին պաշտոնական տվյալների հղումով, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացնում է, որ 2024 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2025 թվականի օգոստոսի 1-ը Իրանից ՀՀ ներմուծվել է շուրջ 1472 տոննա սերուցք: Ընդհանուր ներմուծման արժեքը գերազանցել է մոտ 1.5 միլիարդ դրամը: Իսկ 2025-ին 823.5 տոննա սերուցք՝ ընդհանուր 1,68 մլրդ դրամ արժեքով, սակայն սրանք դեռ 7 ամսվա տվյալներն են. 2025 թվականը դեռ շարունակվում է: «Ժողովուրդ» օրաթերթը դեռ օգոստոսին հրապարակել էր, որ տեղական արտադրության անվան տակ շուկա է մտնում պարսկական սերուցքային հիմքով պատրաստված կարագ կամ կաթնային այլ արտադրանք, որի մի մասը մնում է այստեղ ու, ամենայն հավանականությամբ, հասնում է սպառողի սեղանին կաթի, թթվասերի, կաթնաշոռի, կարագի կամ այլ արտադրանքի տեսքով: Պնդել, որ Իրանից ներմուծվող կաթի սերուցքը վտանգում է սպառողների առողջությունը, դեռ վաղաժամ է, սակայն բաց աղբյուրների որոշակի վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ խնդիր, ամեն դեպքում, կա:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ԱԺ քննիչ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը խախտել է ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի պահանջները. պատերազմի հանգամանքները ուսումնասիրող 210 էջանոց զեկույցը նա չի տրամադրել հանձնաժողովի անդամներին, ինչի հետեւանքով նրանք զրկվել են Կանոնակարգով ամրագրված՝ հատուկ կարծիք ներկայացնելու իրավունքից: ԱԺ Կանոնակարգի Հոդված 25-ը («Քննիչ հանձնաժողովի զեկույցը») հստակ սահմանում է. «1. քննիչ հանձնաժողովն իր գործունեության արդյունքով Ազգային ժողովի նախագահին ներկայացնում է զեկույց, որը ներառում է հանձնաժողովի ստեղծման համար հիմք հանդիսացած հարցի վերաբերյալ պարզված փաստերը, ինչպես նաեւ դրանց առնչությամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ հանձնաժողովի եզրահանգումները: 2. եթե քննիչ հանձնաժողովի անդամների առնվազն մեկ քառորդը զեկույցի վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նրանց ներկայացուցիչը կարող է Ազգային ժողովի նիստում զեկույցի քննարկման ընթացքում հանդես գալ հարակից զեկուցմամբ՝ ներկայացնելով հատուկ կարծիքը»: Սակայն «Ժողովուրդ»-ի հետ զրույցում հանձնաժողովի անդամներից Հայկ Սարգսյանը, Քրիստինե Պողոսյանը նախկին պատգամավոր Վիլեն Գաբրիելյանը հաստատեցին, որ զեկույցը երբեք չեն տեսել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

80 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ ԿՎՃԱՐՎԻ ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ

ՀՊԱՐՏ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆ ՆՈՐԻՑ ՄԵՂՄՎՈՒՄ Է

Wizz Air ավիաընկերությունը երեկ Երեւանում հանդիսավոր միջոցառմամբ հայտարարեց իր 34-րդ բազայի բացման մասին: Ընկերությունը «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում տեղակայեց Airbus A321 Neo տիպի երկու օդանավ, ինչը պաշտոնական ներկայացմամբ դիտարկվում է որպես նոր ներդրում հայկական ավիացիայի զարգացման գործում: Թեեւ այս իրադարձությունը անշուշտ կարող է դիտվել որպես ոլորտի համար դրական քայլ, այնուամենայնիվ կա նաեւ մեդալի հակառակ կողմը. պետական բյուջեից դրա համար նախատեսվում է միլիարդավոր դրամների հատկացում:

Հիշեցնենք, որ դեռեւս ապրիլի 23-ին ՀՀ կառավարությունը հաստատել էր Հայաստանի օդային ուղեւորափոխադրումների զարգացմանն ուղղված աջակցության ծրագիրը: Ծրագրի նպատակն էր խթանել ավիացիոն շուկան եւ ընդլայնել ուղեւորափոխադրումների աշխարհագրությունը: Այս որոշումից անմիջապես հետո Wizz Air-ը հայտարարեց իր մասնակցության մասին՝ համապատասխանեցնելով իր ռեսուրսները ծրագրի պայմաններին եւ դառնալով աջակցության շահառու:

Ըստ կառավարության սահմանած մեխանիզմի՝ «Շիրակ» օդանավակայանից նոր ուղղություններով փոխադրվող յուրաքանչյուր ուղեւորի համար ավիաընկերությանը հատկացվելու է 15 հազար դրամ, իսկ «Զվարթնոց» ժամանողների համար՝ 20 հազար դրամ: Սակայն կարեւոր կետ է ընդգծված, որ տարանցիկ ուղեւորների համար, որոնք Հայաստան մուտք չեն գործելու, որեւէ աջակցություն նախատեսված չէ:

Երեկ «Զվարթնոց» օդանավակայանում կայացած պաշտոնական բացման ժամանակ տեղի ունեցավ նաեւ մամուլի ասուլիս:

«Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը, արձանագրելով հանրային քննարկումների հիմնական մտահոգությունները, մի քանի խնդրահարույց հարց ուղղեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանին:

-Պարոն Պապոյան, խնդրում ենք հստակ թվերով նշել, թե ուրիշների՝ Հռոմում սուրճ խմելու համար ի վերջո որքա՞ն է վճարելու Հայաստանի հպարտ հարկատուն, ինչպես ժամանակին ասել էր Նիկոլ Փաշինյանը:

Նախարարը նախ փորձեց հավաստիացնել, թե ծրագիրը չափազանց մեծ բեռ չի դառնալու բյուջեի համար, ապա, այնուամենայնիվ, հնչեցրեց կլոր թիվ.

-Հայաստանի պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել շուրջ 3 միլիարդ դրամ:

Փաստորեն, Հռոմում սուրճ խմելու համար ՀՀ հպարտ հարկատուների քրտինքով կուտակած բյուջեից ծախսվելու է մոտ 80 միլիոն դոլար:

«Ժողովուրդ» օրաթերթը հարց ուղղեց նաեւ «Wizz Air Hungary»-ի գործադիր տնօրեն Ռոլանդ Տիշին պարզելու համար՝ արդյո՞ք այսպիսի ֆինանսական սուբսիդիաների տրամադրումը միջազգայնորեն ընդունված փորձ է:

Տիշը նշեց, որ դժվարանում է մատնանշել կոնկրետ երկրների ցանկ, սակայն ընդգծեց, որ ավիացիոն շուկայում նմանատիպ ներդրումները համարվում են ստանդարտ գործընթաց. դրանք խթանում են աշխատատեղերի ստեղծումը եւ ունեն տնտեսական կողմնակի արդյունքներ:

Նշենք, որ Wizz Air-ն արդեն հաստատել է իր առաջիկա թռիչքների ուղղությունները Երեւանից. ընկերությունը պատրաստվում է իրականացնելու ավիաչվերթներ դեպի Լարնանկա, Նեապոլ, Պրահա, Համբուրգ, Փարիզ, Բուխարեստ եւ մի շարք այլ եվրոպական քաղաքներ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ աշխատանքից ազատվել է Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Կամո Աշրաֆյանը:

Նշենք, որ Կամո Աշրաֆյանը այդ պաշտոնում նշանակվել էր դեռեւս 2021 թվականի հուլիսին:

Մինչեւ պաշտոնի նշանակվելը Աշրաֆյանը աշխատել է տարբեր բանկերում, իսկ 2020 թվականի օգոստոսի 18-ին նշանակվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման եւ ՀԳՄՀ վարչության պետ, այնուհետեւ աշխատակազմի գլխավոր քարտուղար:

Աշրաֆյանը անկուսակցական է: Ըստ մարզպետարանում շրջանառվող տեղեկությունների՝ նորանշանակ մարզպետ Արեն Մկրտչյանը այդ պաշտոնում այլ թեկնածուի է դիտարկում, ինչի համար էլ Աշրաֆյանին ազատել են պաշտոնից:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՁԵԼ Է ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երեկ Մատենադարանում տեղի ունեցավ Կշիշտոֆ Ստոպկայի եւ Անջեյ Ջեմբայի «Հայերը Լեհաստանում» մենագրության շնորհանդեսը: Գիրքը լույս է տեսել «ԱՆԻՎ» հայագիտական հետազոտությունների զարգացման եւ աջակցության հիմնադրամի եւ Ռուբեն Վարդանյանի հիմնադրամի համատեղ ջանքերով:

Հրատարակությունը մենագրության ռուսերեն թարգմանությունն է: Աշխատության հեղինակները Լեհաստանում եւ Եվրոպայում հայտնի գիտնականներ են, որոնց մի մասը ներկա էր շնորհանդեսին եւ հանդես եկավ ելույթներով:

Մենագրության մեջ ներկայացվում է հայերի ներկայությունը Լեհաստանում տարբեր պատմական ժամանակաշրջաններում՝ սկսած միջնադարյան թագավորություններից մինչեւ մեր օրերը: Հետազոտության աշխարհագրական ընդգրկումը ավելի լայն է, քան Լեհաստանի ներկա սահմանները:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Կշիշտոֆ Ստոպկայը խոսեց գրքի ուղերձի եւ հայերի համար դրա նշանակության մասին՝ ընդգծելով, որ նման աշխատանքները ոչ միայն գիտական արժեք ունեն, այլեւ նպաստում են մշակութային հիշողության պահպանմանը:

«Հայերը Լեհաստանում» մենագրությունը նաեւ յուրօրինակ սկիզբ է դնում «Սփյուռք» հրատարակչական շարքին, որի շրջանակում նախատեսվում է լույս ընծայել գրքեր, նվիրված տարբեր քաղաքներում, շրջաններում եւ երկրներում գործող հայ համայնքներին:

Շնորհանդեսի ընթացքում «ԱՆԻՎ» հիմնադրամի նախագահ Արմեն Խեչոյանը հիշեց Ռուբեն Վարդանյանի հետ ունեցած հանդիպումները եւ նրա ջերմ վերաբերմունքը այս ծրագրի հանդեպ՝ ընդգծելով, որ մենագրությունը կյանքի է կոչվել նաեւ Վարդանյանի աջակցությամբ:

Կարեւոր է հավելել, որ մոտ կես տարուց նախատեսվում է մենագրության հայերեն թարգմանության հրատարակությունը, ինչը լայն հասանելիություն կապահովի հայ ընթերցողների համար:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆՆ ԻՐԵՆ ԹԻՐԱԽԱՎՈՐՎԱԾ Է ԶԳՈՒՄ Ե՛Վ ՔՊ-Ի Ե՛Վ ՄԱՄՈՒԼԻ ԿՈՂՄԻՑ

Շիշ բռնելով հայտնի դարձած Հայկ Սարգսյանը, որը չի ընտրվել ՔՊ վարչության անդամ, փորձում է վրեժխնդիր լինել հարազատ թիմից՝ անվանարկելով այն:

Սեպտեմբերի 30-ին Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանը, լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ անդրադառնալով կուսակցության ներսում իր նկատմամբ հարուցված վարույթին, հայտարարեց. «Ալեն Սիմոնյանն իմ նկատմամբ կարգապահական վարույթ սկսելու հարցով դիմել է ՔՊ կուսակցության վարչությանը 2025թ. մարտի 4-ին: Հիշեցնեմ՝ դա այն օրն էր, երբ ԱԺ-ում քննարկվում էր իմ կողմից շրջանառության մեջ դրված օրենքների նախագծերի փաթեթը, որով նախատեսվում էր երկու անգամ բարձրացնել խաղային ոլորտի հարկային բեռը: Բարեբախտաբար, այդ վարույթը չխանգարեց, եւ օրենքն ընդունվեց հաջորդ օրը:

Սա ինչու եմ ասում, որովհետեւ ես այստեղ ուղիղ կապ եմ տեսել. ինչո՞ւ է իմ գործընկեր Ալեն Սիմոնյանն իմ նկատմամբ կարգապահական պատասխանատվություն հարուցելու դիմումը ներկայացրել հենց մարտի 4-ին, ոչ թե մեկ այլ օր», - ասել էր Սարգսյանը:

Սիմոնյանին մեղադրելուց հետո Սարգսյանն անցավ հարազատ կուսակցության անունը սեւացնելուն եւ ասաց, որ կուսակցության հայտարարության մեջ առկա պնդումը, թե այս վարույթի պարզաբանման համար նրան 2 անգամ կանչել են Վերահսկող հանձնաժողով, չի համապատասխանում իրականությանը, եւ ինքը որեւէ առաջարկ չի ստացել կուսակիցներից՝ իր դիմումի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնելու համար:

Փաստացիորեն, Հայկ Սարգսյանը երբեմնի սիրելի կուսակցությանը ստախոս դարձրեց:

Բայց դա դեռ քիչ էր, նա մամուլին մեղադրեց, թե երբեւէ իր մասին գրված բոլոր նյութերը եղել են բուքմեյքերական ընկերությունների կողմից ուղղորդված թիրախավորումներ: «168am», «Հրապարակ», «Ժողովուրդ» եւ մյուս ԶԼՄ-ներին նա բնութագրեց իրեն «թիրախավորողներ», որոնք գովազդում են բուքմեյքերներին:

Հայկ Սարգսյանը թերեւս մոռացել է, որ ինքն է եղել այն կոճակը սեղմողներից մեկը, որով 7 տարուց ավելի է բուքմեյքերական գովազդները մեդիայում արգելված են, ուստի այդտեղ էլ նա ստեց: Բայց իր ստերի մեջ պատգամավորը այնպես էր խճճվել, որ սկսեց հերքել նաեւ իր մասնակցությամբ լուսանկարները: Թեեւ ՔՊ պատգամավորը խոստովանել էր, որ քրեական հեղինակություն «Տույ»-ի հետ ծանոթացել է մահվան դեպքից 3 տարի առաջ հյուրանոցում, բայց ասաց, թե մեր երկիրը փոքր է, ուղղակի «ծանոթ է եղել նրան»:

Իսկ «Չաղ Ռուստամի» եւ ՔՊ-ական Մհեր Ախտոյանի հետ նրա լուսանկարները անհերքելի փաստերի շարքից են. թեեւ Հայկ Սարգսյանը դա էլ էր փորձում հերքել՝ նշելով, թե դրանք վաղուցվա նկարներ են, ինքը օրինապահ պատգամավոր է եւ քրեական ենթամշակույթը մերժում է:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԹՐԱՄՓԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Գազայի վերաբերյալ իր առաջարկին արձագանքելու համար ՀԱՄԱՍ-ը 3-4 օր ունի:

Ինչպես փոխանցում է The Guardian-ը, այս մասին Դոնալդ Թրամփն ասել է լրագրողների հետ զրույցում՝ հավելելով, որ հակառակ դեպքում ՀԱՄԱՍ-ը «կբախվի հետեւանքների»:

Նա նշել է, որ Իսրայելի եւ արաբական առաջնորդները ընդունել են առաջարկը եւ պարզապես սպասում են ՀԱՄԱՍ-ին:

«ՀԱՄԱՍ-ը կամ կանի դա, կամ ոչ, իսկ եթե ոչ, ապա դա շատ տխուր ավարտ է լինելու»,- ասել է Թրամփը:

ՀՌՈՄԻ ՊԱՊԸ ՔՆՆԱԴԱՏԵԼ Է

Երեքշաբթի Հռոմի Լեւոն XIV Պապը խիստ քննադատել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կոշտ ներգաղթային քաղաքականությունը՝ կասկածի տակ դնելով դրա համապատասխանությունը Կաթոլիկ Եկեղեցու՝ կյանքի պաշտպանության սկզբունքներին՝ գրում է Reuters-ը:

«Եթե մեկն ասում է, որ ես դեմ եմ աբորտներին, բայց համաձայն եմ Միացյալ Նահանգներում ներգաղթյալների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հետ, արդյո՞ք նա կյանքի պաշտպանության կողմնակից է»,- լրագրողներին ասել է հովվապետը:

Կաթոլիկ Եկեղեցու դիրքորոշումն այն մասին, որ կյանքը սուրբ է բեղմնավորումից մինչեւ բնական մահ, 1,4 միլիարդ հետեւորդ ունեցող դավանանքի ամենաուժեղ դրույթներից մեկն է:

Սպիտակ տունը հայտարարել է, որ Թրամփն ընտրվել է իր բազմաթիվ խոստումների շնորհիվ, այդ թվում՝ հանցագործություններ կատարած անօրինական ներգաղթյալներին արտաքսելու մասին:

ԱՄՆ–ՌԻՄ ՇԱԹԴԱՌԻՆ Է

Հոկտեմբերի 1-ին ԱՄՆ-ում պաշտոնապես շաթդաուն է սկսվել, դաշնային կառավարությունը դադարեցրել է աշխատանքը, քանի որ Կոնգրեսը չի կարողացել համաձայնեցնել նոր ֆինանսական տարվա բյուջեն: Սա առաջին նման դեպքն է գրեթե յոթ տարվա ընթացքում: Շաթդաունի ժամանակահատվածում շատ պետական գործակալություններ եւ ծրագրեր դադարեցնում են աշխատանքը, դաշնային աշխատողների մեծ մասը մնում է առանց աշխատավարձի եւ գնում է անժամկետ արձակուրդի:

Ավելի վաղ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել էր, որ կարող է օգտագործել կառավարության գործունեության դադարեցումը՝ անձնակազմի եւ աշխատավարձերի զանգվածային կրճատումներ կատարելու համար: Նա բյուջեի համաձայնեցման խնդրի համար մեղադրել է դեմոկրատներին:

Իրենց հերթին հանրապետականները քննադատել են դեմոկրատներին՝ բյուջետային զգալի ներդրումներ պահանջելու համար, որոնք վերաբերում են, օրինակ, անչափահասների սեռափոխության վիրահատություններին եւ առողջապահական ծառայություններին՝ անօրինական ներգաղթյալների համար:

ՆԱԽԿԻՆ ՈՍՏԻԿԱՆԸ՝ ՔՊ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության վերջին ընտրությունները, ինչպես սպասվում էր, անցան բավականին թեժ մթնոլորտում: Կուսակցության ներսում սպասելի մրցակցությունը չանցավ առանց անակնկալների. սենսացիոն պահեր եղան թե՛ առաջադրված թեկնածուների ցանկում, թե՛ վերջնական ընտրվածների շարքում:

Առավել մեծ քննարկումների առարկա դարձավ ՔՊ-ի պատգամավոր Արմեն Խաչատրյանի հաղթանակը: Կուսակցության ներսում շատերը, փաստորեն, ապշած են մնացել այն բանից, թե ինչպես է հնարավոր եղել, որ նախկինում առանձնապես ակտիվությամբ աչքի չընկած Խաչատրյանը ոչ միայն հայտնվի վարչության կազմում, այլեւ հավաքի ձայների այնպիսի քանակ, որը կարելի է բնութագրել նախանձելի: Այս հանգամանքի շնորհիվ Խաչատրյանը դարձավ մամուլի «Կինդեր սյուրպրիզ-ը, քանի որ նրա ընտրությունը եւ ստացած վստահությունը շատերի համար իսկական անակնկալ էր դարձել:

Իսկ ի՞նչ ունեցվածքով Աժ պատգամավոր Արմեն Խաչատրյանը դարձավ ՔՊ վարչության անդամ.

Արմեն Խաչատրյանը իր մասնագիտական ուղին կառուցել է ոստիկանության համակարգում: 2013-2018 թվականներին նա զբաղեցրել է ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պլանավորման, հաշվառման եւ վերլուծության բաժնի պետի պաշտոնը, իսկ հետո նշանակվել է ճանապարհային ոստիկանության պետի տեղակալ: Այսինքն՝ նրա ծառայողական կարիերան ձեւավորվել է բացառապես ներքին գործերի համակարգում, որտեղից էլ նա հետագայում անցում է կատարել քաղաքական դաշտ:

Հետաքրքրական է նաեւ այն փաստը, որ Խաչատրյանը կարողացել է որդուն եւս տեղավորել պետական համակարգում: Վերջինս աշխատում է ՀՀ Ազգային ժողովի փորձագիտական վարչության պետահրավական փորձաքննությունների բաժնում՝ որպես փորձագետ:

ArmLur.am-ի հրապարակած տվյալների համաձայն՝ պատգամավոր Արմեն Խաչատրյանի գույքային հայտարարագիրը բավականին սուղ է: Ըստ հայտարարագրի՝ նա որեւէ անշարժ գույք չունի, Խաչատրյանի անունով գրանցված է միայն 1986 թվականի արտադրության VAZ մակնիշի մեկ մեքենա՝ 2007 թվականին ձեռք բերված:

Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 43 դոլար եւ գրեթե 180 հազար դրամ: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 16 մլն 599 հազար դրամ, որից 11 մլն 482 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմից, 3 մլն 149 հազար դրամը «այլ եկամուտ» է ՀՀ ֆինանսների նախարարությունից, իսկ 1 մլն 968 հազար դրամը կենսաթոշակ է Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 19 մլն 789 հազար դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՌԴ-Ն ՄԵԾԱՑՆՈՒՄ Է ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐԸ

Ռուսաստանն ակտիվորեն մեծացնում է փոխգործակցությունը ԱՊՀ եւ ԵԱՏՄ երկրների հետ: Այդ մասին հայտարարել է Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Միշուստինը:

Իրականացվում է միասնական արդյունաբերական քաղաքականություն: Միութենական պետությունում համագործակցություն է հաստատվել հաստոցաշինության, ավտոմոբիլային եւ գյուղատնտեսական մեքենաշինության, միկրոէլեկտրոնիկայի ոլորտներում:

Իրականացվում է նաեւ արեւային էլեկտրակայանի կառուցում՝ ռուսական մասնակցությամբ: Ծրագրերը ներառում են երկաթուղային շարժակազմի վերանորոգման եւ սպասարկման իրավասությունների կենտրոնի զարգացումը:

Անցյալ տարվա հունիսին նախագահների աջակցությամբ արդյունաբերական ընկերությունների համար գործարկվեց ֆինանսական օգնության նոր մեխանիզմ: Միության երեք եւ ավելի երկրների ձեռնարկությունների ներգրավմամբ համատեղ նախաձեռնությունների համար վարկերը սուբսիդավորվում են միութենական բյուջեից:

«Ընթացիկ տարում արդեն հավանության է արժանացել երկու կոոպերացիոն նախագիծ: Դիտարկվում են եւս մեկ տասնյակ հայտեր: Հրավիրում եմ «հնգյակի» պետությունների բիզնեսին ավելի ակտիվ օգտագործել նման հնարավորությունը եւ աշխատել միասին: Համագործակցության մեջ մենք ի վիճակի ենք մեծացնել եւ արդիականացնել կարողությունները, արտադրել պահանջարկ ունեցող ապրանքներ», - նշել է Միխայիլ Միշուստինը:

ՄԻԵԴ-Ը ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՀԱՆՋԵԼ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն Ադրբեջանից պահանջում է Բաքվի բանտերում պահվող 23 հայ գերիների պահման եւ առողջական վիճակի մասին հաշվետվություն ներկայացնել՝ վերջնաժամկետ սահմանելով նոյեմբերի 4-ը:

Եվրոպական դատարանում հայ գերիների շահերի ներկայացուցիչ Սիրանուշ Սահակյանը երեկ պանելային քննարկման է եղել եւ նշել է, որ դեռեւս հուլիսին ադրբեջանական կողմը դատարանին միջնորդել էր վերացնել հաշվետվություն ներկայացնելու իր պարտականությունը: Սակայն, Հայաստանի կառավարության եւ եվրոպական դատարանում գերիների ներկայցուցիչների առարկություններից հետո դատարանն ի վերջո մերժել է Ադրբեջանի միջնորդությունը եւ պարտավորեցրել Բաքվին հայ գերիների մասին տեղեկություն ներկայացնել:

Բաքվի բանտերում գտնվող հայ գերիները շուրջ 3 ամիս է հայտնվել են կատարյալ մեկուսացման մեջ, որեւէ միջազգային անկախ կառույց նրանց չի տեսակցել: Նրանց պահման, առողջական ու հոգեբանական վիճակի մասին տեղեկություն չկա:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչները վերջին անգամ հայ գերիներին տեսակցել էին հունիսին:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԸ

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովն ընդունել է ԱՄՆ Պետդեպարտամենտի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով բյուրոյի գլխավոր խորհրդական Ուայթթ Թելկեին եւ ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Էմի Քարլոնին:

Այս մասին հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները՝ հղում անելով Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությանը:

Նշվում է, որ հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացը եւ այդ շրջանակներում Վաշինգտոնյան համաձայնագրերի իրականացումը, Ադրբեջանի եւ ԱՄՆ-ի միջեւ հարաբերությունները, ռազմավարական գործընկերության մասին խարտիա պատրաստելու համար ռազմավարական աշխատանքային խմբի ստեղծման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի, ինչպես նաեւ տարածաշրջանային եւ միջազգային անվտանգության վերաբերյալ հարցեր:

ՎԱԼՈՎՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Ո՞Ւ՞Մ ԹԻՐԱԽՈՒՄ ԷՐ ՓԱՐԱՔԱՐՈՒՄ ՍՊԱՆՎԱԾ ՈՍՏԻԿԱՆԸ

Փարաքարում սպանված Վալոդյա Գրիգորյանի հետ նույն կրակահերթից մահացավ նաեւ ոստիկանության Արարատի մարզի բեռական ոստիկանության օպերլիազոր Կարեն Աբրահամյանը, որը, պարզվում է, Փարաքարի բեռական ներկայացուցիչների կողմից այնման էլ ընկալված կերպար չէր, քանի որ սկզբունքային ոստիկան էր:

«Ժողովուրդ» օրաթերթին իրավապահները ուշագրավ տեղեկություններ փոխանցեցին Կարեն Աբրահամյանի մասին: Պարզվում է՝ նա նախկինում եղել է ՆԳՆ ոստիկանության էջմիածնի բաժնի օպերատիվ աշխատակից: Մամուլը 2024-ին գրել է, որ Փարաքար համայնքի Մերձավան բնակավայրի վարչական ղեկավար, ՔՊ-ական Մեր Ախտոյանին ԱԱԾ-ն ձերբակալել է: Ձերբակալության հիմքերի վերաբերյալ տեղեկություն ստանալու համար «Ժողովուրդ»-ը հարցում է ուղարկել դատախազություն: Ստանալուն պես՝ կհանրայնացնենք:

Բայց ուշագրավն այն է, որ երբ Մեր Ախտոյանը հայտնվել է իրավապահների տեսադաշտում, եւ անհրաժեշտություն է եղել նրան բերման ենթարկելու, օպերատիվ խմբի գլխավոր «դերակատարը» եղել է հենց Կարեն Աբրահամյանը, որի հանդգնությունը Ախտոյանը դրական չի գնահատել, ենթադրաբար համարելով՝ ինչպե՞ս է Վալոդյա Գրիգորյանի ընկեր Կարեն Աբրահամյանը համարձակվել ձերբակալել իրեն:

Այս ամենը բացասաբար է ընկալվել Մեր Ախտոյանի կողմից, որը մոտ 15 օր է Հայաստանում չէ, եւ, հիշեցնենք, նրան երկրից դուրս գալիս ճանապարհելու համար օդանավակայան է տարել համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյանին սպանած 20-ամյա Գեւորգ Հարությունյանը:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 23-ին՝ 23:50-ին, Փարաքարի իր կիսակառույց տան բակում սպանվեց համայնքի ընտրված ընդդիմադիր ղեկավար Վալոդյա Գրիգորյանը, նրա ընկեր, ոստիկանության Արարատի օպերատիվ աշխատակից Կարեն Աբրահամյանը, եւ վիրավորվեց Արծրուն Գալստյանը, որի եղբոր տղաները՝ Արթուր Գալստյանը, Մարզպետ Գալստյանն ու Սեւակ Գալստյանը 7 ամիս առաջ Մերձավանում հնչած կրակոցների գործով մեղադրյալի աթոռին են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԿԿԱՐԳԱԴՐԵՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ ՋԱԼԱԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ոստիկանությանը կարգադրագիր կտրամադրվի ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանին կալանավորելու համար:

Փաստաբան Լիպարիտ Սիմոնյանը մեզ հայտնեց, որ «ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.09.2025 թ. որոշմամբ մեղադրյալ Ջալալ Հարությունյանի եւ նրա պաշտպանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, եւ դատավճիռն ստացել է օրինական ուժ: Դատապարտյալ Ջալալ Հարությունյանը պատիժը կկրի համապատասխան քրեակատարողական հիմնարկում»:

Նշենք, որ Արցախի Պաշտպանության բանակի նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանը դատապարտվել է 5.5 տարվա ազատազրկման: Առաջին ատյանի դատարանի այս որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարանում, ու մեղադրվող կողմը, ըստ տուժողների, ամեն ինչ անում է ՀՀ վերաքննիչ դատարանում նիստերը հետաձգելու համար, որպեսզի վաղեմության ժամկետի հիմքով ամբաստանյալը ազատվի պատասխանատվությունից:

Սակայն հունիսի 18-ին Վերաքննիչ դատարանը դատավոր Մխիթար Պապոյանի նախագահությամբ անփոփոխ թողեց Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանի վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը, որով նա դատապարտվել է 5 տարի 6 ամիս ազատազրկման: Արդյունքում, վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվել էր Վճռաբեկ դատարան, եւ դատարանը այն վարույթ չընդունեց:

Ջալալ Հարությունյանը մեղադրվում է սխալ հրաման տալու համար: Իրավապահները պնդում են, որ հենց նրա գործողությունների հետեւանքով Ցորի զորամասի 20 զինվոր հայտնվել է հակառակորդի թիրախում ու սպանվել, իսկ զորամասն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆՔ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի երկու պաշտոնատար անձինք նախնական համաձայնությամբ, դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելով, կատարել են խոշոր չափերով՝ 4.501.550 ՀՀ դրամի հափշտակություն եւ պաշտոնեական կեղծիք:

Մասնավորապես, 2022 թվականի ընթացքում ՊՈԱԿ-ի կարիքների համար տարբեր ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերման նպատակով ներկայացված գնման հայտերի հիման վրա նշված ՊՈԱԿ-ից մի շարք ԱՁ-ների եւ ՍՊԸ-ների պարբերաբար փոխանցվել են նախատեսվածից ավելի գումարներ, որոնք վերջիններիս կողմից կանխիկացվել եւ փոխանցվել են վերը նշված պաշտոնատար անձանց:

Նախաքննությամբ պարզվել է նաեւ, որ մի շարք դեպքերում որոշ ապրանքներ ընդհանրապես չեն առաքվել եւ գնման հայտերով նախատեսված ծառայությունները չեն մատուցվել, սակայն նշված պաշտոնատար անձինք կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունների մեջ մտցրել են տվյալ ծառայությունը մատուցված լինելու կամ ապրանքը առաքված լինելու վերաբերյալ կեղծ տեղեկություններ:

Վերը նշված հանցավոր արարքների համար երկու պաշտոնատար անձանցից մեկին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով, իսկ մյուսին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով եւ 445-րդ հոդվածի 1-ին մասով: Վերջիններիս նկատմամբ որպես համակցված խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքն ու պաշտոնավարման կասեցումը:

Պետությանը պատճառված 4.501.550 ՀՀ դրամի վնասը նախաքննության ընթացքում ամբողջությամբ վերականգնվել է: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն դատարան:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Քրեական ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության եւ Համայնքային ոստիկանության Մարտունու բաժնի ծառայողները համատեղ միջոցառումների արդյունքում սեպտեմբերի 24-ին Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհին՝ Ներքին Գետաշեն բնակավայրի վարչական տարածքում ձերբակալել եւ բաժին են ներկայացրել Ներքին Գետաշեն գյուղի բնակիչ 22-ամյա եւ Մարտունու բնակիչ 29-ամյա երկու երիտասարդի: Այս մասին հայտնում է ՆԳՆ ոստիկանությունը:

22-ամյա երիտասարդի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է ընդհանուր 5 գրամից ավելի քաշով մեթամֆետամինի զանգվածով ապակյա ծխամորճ: Պարզվել է, որ նա թմրամիջոցը ձեռք է բերել «Տելեգրամ» հավելվածի միջոցով:

29-ամյա երիտասարդի անձնական խուզարկությամբ նույնպես հայտնաբերվել է մեթամֆետամին: Պարզվել է, որ թմրամիջոցը նրան տվել էր 22-ամյա երիտասարդը, որի մի մասը միասին օգտագործել էին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում խուզարկություն է կատարվել 22-ամյա երիտասարդի բնակության հասցեում եւ կից շինությունում: Հայտնաբերվել են կանեփանման զանգվածով փաթեթներ եւ կանեփի չորացրած բույսեր:

Ներքին Գետաշեն գյուղի բնակիչ 22-ամյա երիտասարդը կալանավորվել է: Կատարվում է նախաքննություն:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՏՂԱՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԻՆ

Սեպտեմբերի 30-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 16:00-ին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մալաթիայի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Հաղթանակ թաղամասում՝ Շահումյան փողոցի տներից մեկում, ծառից կախված դի կա: Այս մասին հայտնել է Shamshyan.com-ը:

Տեղում պարզվել է, որ ստացված տեղեկությունը հավաստի է. նշված տան բակում ծառից կախված հայտնաբերվել է նույն տան բնակիչ, 50-ամյա Կարեն Բ-ի դին:

ՍԻՆԹԵՏԻԿ ԹՄՐԱՄԻՋՈՑ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի պարեկները սեպտեմբերի 28-ին մայրաքաղաքի Մեսրոպ Մաշտոցի պողոտայում ձերբակալել եւ «Կիա» մակնիշի մեքենայով հանդերձ՝ Համայնքային ոստիկանության Կենտրոնական բաժին են տեղափոխել Երեւանի բնակիչ 33-ամյա մի երիտասարդի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մեթամֆետամին տեսակի թմրամիջոցի նմանվող բյուրեղանման զանգված: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին, իսկ մեքենան տեղափոխվել է պահպանվող հատուկ տարածք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտ. 30-ից հոկտեմբերի 1-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 112 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ

Վահագն Զաքարյանի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ Լեւոն Հովհաննեսի Բարդակջյանի, եւ խնդրել է պարտավորեցնել պատասխանողին վերացնել հայցվորի սեփականության իրավունքի խախտումները, այն է՝ վերականգնել Տավուշի մարզ, համայնք Դիլիջան, Խորհուրդների 25/3 հողամասի փլուզված հատվածը, բերել նախկին տեսքի: Դատարանը 2023թ. հուլիսի 25-ին Իջեւան քաղաքում կայացած նիստում որոշել է սույն քաղաքացիական գործով կայացնել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում: 2023 թ. սեպտեմբերի 19-ի նիստում դատարանը որոշել է քաղաքացիական գործով նշանակել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի փորձագետներին, նրանց առաջադրել հետեւյալ հարցերը՝

ա) որքա՞ն են կազմում Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Խորհուրդների 25/3 հասցեի թիվ 10122019-11-0007 վկայականի, ք. Դիլիջան, Խորհուրդների 23/1 հասցեի թիվ 09012019-11-0018 վկայականի եւ ք. Դիլիջան, Մյասնիկյան 16/1 հասցեի թիվ 23062020-11-0011 վկայականի տվյալներով, ինչպես նաեւ պատասխանող Լեւոն Հովհաննեսի Բարդակջյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի հողամասերի իրական չափերը,

բ) ք. Դիլիջան, Խորհուրդների 25/3 հասցեի թիվ 10122019-11-0007 վկայականի, ք. Դիլիջան, Խորհուրդների 23/1 հասցեի թիվ 09012019-11-0018 վկայականի եւ ք. Դիլիջան, Մյասնիկյան 16/1 հասցեի թիվ 23062020-11-0011 վկայականի տվյալներով հողամասերի եւ սահմանակից պատասխանող Լեւոն Հովհաննեսի Բարդակջյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի հողամասի հետ համադրում առկա՞ է, թե՞ ոչ,

գ) ո՞րն է Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Խորհուրդների 25/3 հասցեում գտնվող հողամասի առկա վնասվածքների առաջացման պատճառը,

դ) Արդյո՞ք Դիլիջան, Խորհուրդների 25/3 հարակից տարածքում պատասխանող Լեւոն Հովհաննեսի Բարդակջյանի սարալանջի քանդման աշխատանքները կարող են հանդիսանալ հայցվորին սեփականությամբ պատկանող հողամասի մի մասի փլուզման պատճառ, ե) արդյո՞ք, ք. Դիլիջան, Խորհուրդների 25/3 հարակից տարածքում պատասխանող Լեւոն Հովհաննեսի Բարդակջյանի սարալանջի քանդման աշխատանքները կարող են ազդել տարածքի սեյսմակայունության վրա:

Սույն գործով դատական վերջին նիստը կայացել է 2025թ. սեպտեմբերի 23-ին: Լեւոն Բարդակջյանը Երեւանի ավետարանական եկեղեցու առաջնորդն է: Սույն դատի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար օրեր շարունակ զանգահարեցինք Երեւանի Ավետարանական եկեղեցի, սակայն Լեւոն Բարդակջյանի հեռախոսահամարը չփոխանցեցին, խոստացան, որ նրա փաստաբանը կկապվի մեր թղթակցի հետ. դա տեղի չունեցավ:

«Դատալեքս» տեղեկատվական համակարգում քաղաքացիական հայցերով Լեւոն Բարդակջյանի վերաբերյալ կայացած բազում դատերի մասին տեղեկատվություն կա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՇՈՒՐՋ 6 ՄԼՐԴ ԴՐԱՄ ՀԱՏԿԱՑՈՒՄ

ՄԵԾ ԾԱԽՍԵՐ՝ ՀՀ-ՈՒՄ COP17-ԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունից հայտնել էին, որ 2026 թվականի հոկտեմբերի 18-ից 30-ը Հայաստանում կկազմակերպվի ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովը՝ COP17-ը:

Նախորդ տարի հոկտեմբերի 31-ին Կոլումբիայում ընթացող ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 16-րդ համաժողովի ընթացքում Հայաստանը 65 ձայնով ընտրվել է որպես 17-րդ համաժողովի հյուրընկալ եւ այդ ընտրությամբ Հայաստան է բերել բազում ծախսեր:

ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի գլխավոր քարտուղար Աստրիդ Շոմեյքերի ղեկավարած պատվիրակությունը 2025 թ. մարտի 3-6-ը այցելել է Երեւան, ինչի շրջանակում, ի թիվս COP17-ի նախապատրաստման այլ հարցերի, քննարկվել է նաեւ համաժողովի անցկացման վայրի ընտրության վերաբերյալ հարցը:

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի եւ «Մերիդիան Հոլդինգ» ՓԲԸ-ի միջեւ կնքվել է 5 մլրդ 775 մլն դրամ՝ շուրջ 6 մլրդ դրամ արժողությամբ պայմանագիր:

Համաձայն այս պայմանագրի՝ գումարը կծախսվի «Մերիդիան» էքսպոկենտրոնում տարածքների վերանորոգման, կառուցման եւ բարեկարգման աշխատանքների վրա՝ ամբողջ տարածքը համապատասխանեցնելով վերոնշյալ միջոցառումը «Մերիդիան» էքսպոկենտրոնում բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Հիշեցնենք, որ հենց այս միջոցառման համար էլ Նիկոլ Փաշինյանի հրամանով ՇՄՆ նախարար Հակոբ Սիմիդյանն ազատվեց պաշտոնից, իսկ նրա փոխարեն նշանակվեց Համբարձում Մաթեւոսյանը, ում ուսերին է դրված համաժողովը պատշաճ իրականացնելու պարտավորությունը, իսկ Փաշինյանը պարբերաբար նրա հետ հանդիպումներ է ունենում այդ թեմայով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՆՉ ՎԱՐԿԱԾՆԵՐ ԵՆ ՇՐՋԱՆԱՌՎՈՒՄ

Երեւանի Պուշկինի փողոցի շենքերից մեկում օրերս բռնկված հրդեհը լայն քննարկումների տեղիք է տվել: Սոցցանցերում տարածվում են տարբեր վարկածներ այն մասին, թե հրդեհը դիտմամբ է կազմակերպվել: Մեղադրանքների թիրախում հաճախ հիշատակվում են քաղաքային իշխանությունները:

Հրդեհված շենքում՝ Պուշկինի 4 հասցեում, գործում է «ArtKvartal» ժամանակակից արվեստի պատկերասրահը, որը հիմնադրել են արվեստագետներ Հարություն Հովսեփյանն ու Սերո Սողոմոնյանը: Տարածքը նրանց տրամադրել էր սեփականատերը: Հենց այստեղ էլ ծավալվել են խոսակցություններ, թե նպատակ են ունեցել շենքը քանդելու ու կառուցապատում իրականացնելու, սակայն սեփականատերը հրաժարվել է վաճառքից, ուստի այն դիտմամբ հրկիզվել է:

Արվեստագետ Հարություն Հովսեփյանը, սակայն, «Ժողովուրդ»-ի հետ զրույցում նման ենթադրությունները անվանեց անհիմն: Հովսեփյանի նշեց նաեւ՝ ներսում պահվող նկարները հաջողվել է դուրս բերել:

Հիշեցնենք, որ ՆԳՆ պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ հրդեհի հետեւանքով այրվել են շինությունը՝ տանիքով (մոտ 375 քմ), ինչպես նաեւ գույք ու սարքավորումներ՝ մասամբ:

Հարկ է նշել, որ շենքը 2021 թվականին հանվել է Կառավարության 2013 թվականի որոշմամբ հաստատված՝ «գերակա հանրային շահ» ճանաչված տարածքների ցանկից: Այդ ժամանակ փոխվարչապետի պաշտոնակատար Տիգրան Ավինյանը նշել էր, որ, հաշվի առնելով պատմամշակութային արժեքների պահպանման խնդիրը, որոշվել է տվյալ հասցեները հանել այդ ցուցակից: Քաղաքապետարանին առաջարկվել էր մշակել նոր քաղաքաշինական սխեմա:

«Ես ուզում եմ ուղղակի հատուկ շեշտել, որ պատմամշակութային արժեք ներկայացնող նման շենքերի ձեւափոխումները, քանդումը, տեղափոխումը, ընդհանուր առմամբ, ընդունելի չէ կառավարության համար», - նշել էր Ավինյանը:

Սակայն մինչ օրս շենքի պատշաճ պահպանման ուղղությամբ ոչինչ չի արվել: Հիմա արդեն հրդեհից հետո այն կանգնած է փլուզման վտանգի առաջ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ Ազգային ժողովն արտահերթ նիստ է հրավիրելու՝ ՔՊ խմբակցության կողմից հոկտեմբերի 1-ի որոշմամբ շրջանառության մեջ դրված ԱԺ հայտարարության նախագիծն ընդունելու համար:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ՀՀ Ազգային ժողովը նախատեսում է արտահերթ նիստ անել՝ քննարկելու եւ ընդունելու Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատման վերաբերյալ ՀՀ ԱԺ հայտարարության նախագիծը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հայտարարության հեղինակը Քաղաքացիական պայմանագիր խմբակցությունն է, որը մոտ 3 էջանոց հայտարարություն է պատրաստել: Այդ փաստաթղթով ԱԺ-ն իր աջակցությունն է հայտնում օգոստոսի 8-ին Վաշինգտոնում նախաստորագրված հռչակագրին: ԱԺ-ն ողջունում է ստորագրմանն ուղղված ջանքերը, կարեւորում է ձեռք բերված պայմանավորվածությունը անխոչընդոտ ճանապարհի վերաբերյալ, երախտագիտություն է հայտնում Թրամփին անուրանալի ջանքերի համար: Վերջում ԱԺ-ն 9-րդ կետով կոչ է անում Հայաստանի եւ Ադրբեջանի հանրային քաղաքական, փորձագիտական, մշակութային շրջանակներին ձեռնպահ մնալ կոնֆլիկտը բորբոքելուն ուղղված խոսույթներից եւ գործողություններից, հաստատված խաղաղության հարատեւությունն ու հուսալիությունը հանուն հարավային կովկասի բարգավաճման երաշխավորման:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ հնարավոր է այսօր ԱԺ նստաշրջանի ավարտից հետո գումարվի արտահերթ նիստ՝ այս հայտարարության ընդունման համար, որպեսզի ՔՊ-ական պատգամավորները ԱԺ ամբիոնից գովերգեն Նիկոլ Փաշինյանին, որը խաղաղություն է բերել արդեն մեկ ամսից ավել:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանի նախկին արտգործնախարար Թոֆիկ Զուլֆուղարովը հարցազրույց է տվել ադրբեջանական haqqin.az-ին եւ հայտարարել է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Մոսկվա կատարած այցից հետո կտրուկ փոխել է «Զանգեզուրի միջանցքի» վերաբերյալ իր հռետորաբանությունը եւ այժմ փորձում է Ադրբեջանին դարձնել իր սաբոտաժի մեղավորը:

Զուլֆուղարովի խոսքով՝ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը փաստացի արգելել է Փաշինյանին կատարել Վաշինգտոնում ձեռք բերված համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները: Նա ընդգծել է, որ վաշինգտոնյան հանդիպման իրական արդյունքները այն են, որ Հայաստանը երկկողմ փաստաթղթեր է ստորագրել ԱՄՆ-ի հետ եւ պարտավորություն ստանձնել բանակցություններ սկսել «Զանգեզուրի միջանցքի» օգտագործման ձեւաչափի վերաբերյալ:

Նրա խոսքով՝ Փաշինյանի դիրքորոշման կոշտացումը բացատրվում է Մոսկվայի ճնշմամբ: Ներկա իրավիճակից ամենից շատ դժգոհ են Ռուսաստանն ու Իրանը, քանի որ ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի մասնակցությամբ բանակցությունների նոր ձեւաչափերը թուլացնում են նրանց ազդեցությունը տարածաշրջանում:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար, 33 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼ Է ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄՆ ՈՒ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

«Ֆասթ» բանկն աջակցել է Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի նորակառույց շենքի նախագծի իրականացմանը՝ ֆինանսավորելով սանհանգույցների ամբողջական նորոգումն ու կահավորումը: Հիշեցնենք, որ Համազգային թատրոնն ավելի քան երեք տասնամյակ գործել է առանց սեփական տարածքի:

Սեփական բեմ ունենալը թատրոնի հիմնադիր Սոս Սարգսյանի երազանքն էր: Տարիներ անց այդ երազանքը վերածվել է իրականության՝ պետական եւ մասնավոր համագործակցության շնորհիվ:

Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի տնօրեն Ղուկաս Մադոյանն ասել է. «Մենք ի սկզբանե շատ էինք կարեւորում հենց մասնավորի դերը շենքի կառուցման գործում: Սա մշակութային կառույց է, որը միայն պետական եւ մշակույթի նախարարության բեռը չէ: Շատ կարեւոր է, որ հենց մասնավոր ընկերությունները մասնակցեն շինարարության աշխատանքներին տարբեր հատվածներով»:

Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնը դարձել է անկախության շրջանի առաջին թատերական շենքը, որը կառուցվել է նոր հիմքերից: Թատրոնը շուտով կբացի իր դռները եւ կընդունի առաջին հանդիսատեսին սեփական հարկի տակ:

«Ֆասթ» բանկում կարեւորում են մշակութային վայրերի արդիականացումը եւ մշտապես ներդրումներ են կատարում այդ ոլորտում:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

«Ֆասթ» բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի բոլոր այն բաժնետերերին, որոնք դեպոզիտորիայում չունեն իրենց ճշտված հասցեները, հաշվեհամարները, հեռախոսահամարները, խնդրվում է ներկայանալ Կոտայքի մարզ, գ. Ջովունի 1 փողոց 142 հասցեով՝ տվյալները նորովի գրանցելու նպատակով:

Միաժամանակ հիշեցման կարգով տեղեկացնում ենք, որ ընկերության տարեկան ընդհանուր ժողովները տեղի են ունենում յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսի վերջին ուրբաթ օրը:

Հարցերի դեպքում զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ 091426038, 093535356, 093881050:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՀԻՄՆՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 1240 ՀԵԿՏԱՐ ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԻ

Հայաստանում գյուղատնտեսությամբ զբաղվում է ավելի քան 225.000 մարդ, սակայն կլիմայի փոփոխության հետեւանքները լուրջ մարտահրավերներ են ստեղծում՝ ջրի պակաս, երաշտ, կարկտահարություններ:

Կլիմայական ռիսկերի հաղթահարման խնդիրների շուրջ Ասիական զարգացման բանկը եւ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պանելային քննարկում են կազմակերպել՝ ֆինանսական հաստատությունների, ֆերմերների ու փորձագետների մասնակցությամբ՝ հնարավոր արդյունավետ լուծումներ գտնելու նպատակով:

Հայաստանում ինտենսիվ այգեգործությունը կլիմայական հարմարվողականությանը հասնելու առաջնային ուղղություններից մեկն է: «Ակբա» բանկի աջակցությամբ Հայաստանում վերջին տարիներին հիմնվել է շուրջ 1244 հեկտար ինտենսիվ այգի, ներդրվել են ժամանակակից ոռոգման համակարգեր ու կարկտապաշտպան ցանցեր: Բանկը այս առումով միայն 5 տարում ներդրել է շուրջ 18 միլիարդ ՀՀ դրամը:

«Մենք կարեւորում ենք կլիմայական փոփոխություններին գյուղոլորտը հարմարեցնելու բոլոր ծրագրերը: Այս առումով այժմ այլընտրանք չունեն կարկտապաշտպան ցանցերը, կաթիլային ոռոգման համակարգերը, տնտեսություններին կից կառուցվող հատուկ լճերը, որոնցից օգտվում են կաթիլային ոռոգման համակարգերը: Եվ մենք խորհուրդ ենք տալիս մեր հաճախորդներին, որ այդ համակարգերի ներդրումները կարեւոր են եւ իզուր չեն: Մի քանի տարի առաջ, մինչեւ այս ծրագրերը, մենք մեր առաջ խնդիր էինք դրել, որպեսզի գյուղատնտեսությունը դարձնենք այնպիսի բիզնես, որ գյուղատնտեսությամբ զբաղվեն ոչ միայն գյուղական բնակավայրերի մարդիկ, այլեւ քաղաքում ապրողները գնան ու գյուղատնտեսություն ծավալեն մարզերում»,- նշել է «Ակբա» բանկի մանրածախ բիզնեսի տնօրեն, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Արսեն Մելքոնյանը:

«Մենք քննարկումներ ենք ունենում մշակվող հողատարածքները սպասարկելու եւ ջրով ապահովելու շուրջ: Եթե բոլորը չսկսեն կիրառել ջրախնայող տեխնոլոգիաներ, նույնիսկ այն ֆերմերները, ովքեր երբեւէ ջրի խնդիր չեն ունեցել, մենք բոլորս ենք ձախողելու»,- նշել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը:

«Մենք տեսնում ենք Հայաստանում կլիմայի փոփոխության հետեւանքները, ինչը բարձր ռիսկեր է առաջացնում: Միաժամանակ, ջրի աճող պահանջարկը թե՛ շրջակա միջավայրի, թե՛ խմելու ջրի համար, նույնպես ազդում են, թե ինչպես պետք է երկիրը կառավարի իր ռեսուրսները: Միեւնույն ժամանակ, Հայաստանը հսկայական ներուժ ունի դառնալու տարածաշրջանի ամենամեծ գյուղմթերք արտադրողներից մեկը: Հայկական դեղձն ու ծիրանը չափազանց համեղ են եւ երկիրն ունի պոտենցիալ վերջիններս միջազգային բրենդ դարձնելու համար: Ասիական զարգացման բանկը պատրաստ է իր աջակցությունը տրամադրել, որպեսզի նման արտադրանքները միջազգային բրենդավորում եւ ճանաչում ստանան»,- նշել է ԱԶԲ գյուղատնտեսության, պարենի, բնության եւ գյուղական համայնքների զարգացման ոլորտի տնօրեն Յասմին Սիդիքը:

«Ակբա» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿԸ» ՄԻԱՑԵԼ Է «ԱրՔա» QR ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՑ

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն ներկայացրեց ArcaQR համակարգը՝ վճարումներ QR-ով, որոնք կատարվում են մեկ սմանով՝ անմիջապես բանկային հաշվից:

Սեպտեմբերի 30-ին պաշտոնապես մեկնարկեց ArcaQR-ը՝ դարձնելով ամենօրյա վճարումները պարզ ու հարմար բոլորի համար:

«Արդշինբանկ»-ը եւս միացել է ArcaQR համակարգի նախագծի մեկնարկին:

«Արմենիան Քարդ» ՓԲԸ գործադիր տնօրեն Վարդան Խաչատրյանը նշել է.

«ArcaQR-ը մեր հերթական քայլն է՝ զարգացնելու անկանխիկ վճարումների մշակույթը Հայաստանում: Մենք համոզված ենք, որ QR վճարումները կդառնան առօրյայի մի մասը՝ առաջարկելով սպառողներին հարմարավետություն, բիզնեսներին պարզ ու մատչելի վճարումների հնարավորություն, իսկ գործընկեր բանկերին՝ մոբայլ հավելվածի օգտագործման հաճախականության ավելացում»:

«ArcaQR համակարգի ստեղծումը նշանակալից քայլ է՝ ապահովելու վճարային ենթակառուցվածքների անընդհատությունը, անվտանգությունը եւ անխափան աշխատանքը: Արդշինբանկը շատ է կարեւորում ArcaQR համակարգի մեկնարկը եւ ուրախ է հանդես գալ որպես համակարգի մասնակից՝ առաջարկելով այլընտրանքային եւ անվտանգ վճարային լուծումներ՝ անկանխիկ վճարումների մշակույթը խթանելու, հաճախորդների ամենօրյա բանկային կարիքները բավարարելու, նրանց փորձառության եւ սպասարկման որակը բարձրացնելու համար», - նշեց «Արդշինբանկ» ՓԲԸ-ի վարչության անդամ, ՓՄՁ բիզնեսի տնօրեն Միհրան Մուրադյանը:

«Արդշինբանկի» մասին

«Արդշինբանկը» Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: «Արդշինբանկն» ունի շուրջ 570.000 հաճախորդ, որոնց սպասարկում են բանկի 2300-ից ավելի աշխատակիցներ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման ու վաճառքի հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 72 մասնաճյուղերով, համապարփակ մոբայլ եւ օնլայն բանկինգի համակարգերով:

Բանկն ունի երկրում ամենալայն մասնաճյուղային ցանցը, ինչպես նաեւ ներկայացուցչություն Փարիզում: «Արդշինբանկը» Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitch (BB- (Stable)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍԹԻՆԳ

ԱՇԽԱՐՀԻ ԲԵՄԵՐԸ ՆՎԱՃԱԾ ԲՐԻՏԱՆԱՑԻՆ ՆՇՈՒՄ Է ԻՐ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

«Երաժիշտների խնդիրն այս կատարելությունը գեղեցիկ շրջանակի մեջ դնելն է: Այլ կերպ՝ այս կատարելության շուրջ գեղեցիկ շրջանակ ստեղծելն է», ասում է Սթինգը, ով իդեալական երաժշտություն է համարում լռությունը, որը հնարավորություն է տալիս կենտրոնանալ սեփական անձի եւ ներքին աշխարհի վրա: Իսկ ի՞նչ է անում բրիտանացի երաժիշտը, եթե կատարյալը արդեն գոյություն ունի: Նա ստեղծում է գեղեցիկ շրջանակ դրա շուրջ՝ երաժշտությամբ լրացնելով ու դահիճանելով ներդաշնակությունը: Դատելով երկրպագուների բազմությունից՝ նրան դա հաջողվում է:



Այսօր անգլիացի սիրված երաժիշտ, երգիչ-երգահան Սթինգի (Գորդոն Մեթյու Թոմաս Սամներ) ծննդյան օրն է. նա դարձավ 74 տարեկան:

Մի հարցազրույցում Սթինգը խոստովանել է, որ մանկությունը իր կյանքի այն շրջանը չէ, որը կցանկանար կրկնել: Պատճառը պարզ է. նա ծնվել է ընտանիքում, որտեղ գումարը բավականացնում էր միայն ամենաանհրաժեշտին:

Երաժիշտը ծնվել է 1951թ. հոկտեմբերի 2-ին Անգլիայի հյուսիսարեւելյան արդյունաբերական խոշոր քաղաքում՝ Նյուքասլ-ապոն-Թայնում:

1971-ին Գորդոնը ընդունվեց ուսուցչական քոլեջ եւ ավարտեց այն՝ անգլերենի ու երաժշտության դիպլոմով: Այդ վկայականով նա գնաց փորձաշրջանի միջնակարգ դպրոցում, ապա երկու տարի աշխատեց տարրական դպրոցում որպես ուսուցիչ:

Գորդոն Սամների կարիերան, արդեն Սթինգ անունով, հաջող սկսվեց: 1985-ի ամռանը նա թողարկեց իր առաջին սոլո ալբոմը՝ «The Dream of the Blue Turtles»: Մեծ Բրիտանիայում այն հասավ չարթերի երրորդ, իսկ ԱՄՆ-ում՝ երկրորդ տեղին: Չնայած կոմպոզիցիաներում զգացվում էին «The Police»-ի արձագանքները, ալբոմը առանձնանում էր ջազային հնչողությամբ: Այդ ոճով Սթինգը հետաքրքրվել էր երիտասարդ տարիներից եւ այժմ ուներ այն նվագելու հնարավորություն:

Նրա ոգեշնչման աղբյուրը միշտ եղել է շրջապատող իրականությունը: 1991-ին նա թողարկեց «Soul Cages» ալբոմը, որը երկրպագուները համարում են ամենամելանխոլիկը: Պատճառը ծնողների մահն էր: Բայց մելանխոլիան երկար չտեւեց. հաջորդ «Ten Summoner's Tales»-ը լցված էր լույսով ու ուրախությամբ:

Երաժշտին ստեղծագործելու մղեց նաեւ 2001-ի սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը: Իր տպավորությունները նա արտացոլեց «Sacred Love» ալբոմում:

Այսօր Սթինգը ապրում է Նյու Յորքում իր ընտանիքի հետ: Շարունակում է ակտիվ ելույթներ ունենալ եւ 1-3 տարին մեկ թողարկել նոր ալբոմ: Նրա շրջագայությունները ընդգրկում են Եվրոպան, Ռուսաստանը, Բրազիլիան, Ամերիկան:

«Ժողովուրդ»-ը ներկայացնում է նաեւ հետաքրքիր փաստեր երգչի մասին:

• «Sting»-ը կեղծանունը նշանակում է «խայթել»: Կեղծանվան ծագման մի քանի տարբերակ կա ըստ մեկի՝ երիտասարդ տարիներին նա մշտապես կրում էր սեւ-դեղին շերտավոր սվիտեր, որն անմիջապես հիշեցնում էր մորեխ կամ բզեզ: Մյուս վարկածով՝ նա պարզապես փոխառել է այդ անվանումը: Ընկերներն ու ծանոթները վստահ են, որ այն արտացոլում է նրա համառ ու երբեմն չհանդուրժող բնավորությունը:

• Մանկուց նա երազում էր դառնալ երաժիշտ եւ... ֆուտբոլիստ:

• Սթինգը իր ընթերցասեր լինելու համար պարտական է տատիկին, որը նրան նվիրեց «Գանձերի կղզին» գիրքը:

• Ծնողները կաթոլիկ էին եւ երեխաներին էլ դաստիարակում էին այդպես: 7 տարեկանում Սթինգը երգում էր եկեղեցական երգչախմբում եւ օգնում քահանային:

• Երաժշտության աշխարհը նրա առջեւ բացեցին մայրը եւ մորեղբայրը. մայրը նվագում էր դաշնամուր, իսկ մորեղբայրը թողել էր կիթառը, որը դարձավ Գորդոնի առաջին գործիքը:

• Սթինգի որդին՝ Ջոզեֆ Սամները, նույնպես ընտրեց երաժշտի ուղին:

• Երիտասարդ տարիքում նա զբաղվել է թեթեւ աթլետիկայով եւ անգամ զբաղեցրել է երկրորդ տեղը կարճ վազքում:

• Նա ունի սեփական գինեգործարան, եւ նրա գինիները գնահատվել են միջազգային փորձագետների կողմից:

Սթինգն առանձնանում է իր սկզբունքների հանդեպ հավատարմությամբ. նա երբեք չի վախեցել երգել այն մասին, ինչն իրեն անհանգստացնում է՝ լինի քաղաքականություն, սոցիալական խնդիրներ թե սեր:

Սա էլ հենց Սթինգի տաղանդն է. խոսել կյանքի մասին երաժշտության լեզվով:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Մադրիդի «Ռեալի» հարձակվող Կիլիան Մբապեն բարձրացել է Չեմպիոնների լիգայի լավագույն ռմբարկուների ցուցակի մաքուր վեցերորդ հորիզոնական:

Նա իր գոլերի թիվն ավելացրել է մրցաշարի երկրորդ փուլում՝ երեք գնդակ ուղարկելով Ալմաթիի «Կայրաթի» դարպասը: Սա նրա 58-րդ գոլն էր Չեմպիոնների լիգայում:

Այս գոլի շնորհիվ Մբապեն առաջ է անցել «Բավարիայի» նախկին կիսապաշտպան Թոմաս Մյուլերից, ով խփել է 57 գոլ: Ֆրանսիացի հարձակվողից անմիջապես առաջ է «Ռեալի» նախկին հարձակվող Ռաուլը, ով 142 խաղում խփել է 71 գոլ:

Մբապեն նաեւ հավասարվել է արտագնա հանդիպումներում գրանցված հեթ-տրիկների քանակով «Միլանի» եւ «Յուվենտուսի» նախկին հարձակվող Ֆիլիպպո Ինձագիին: Ֆուտբոլիստներն այս ցուցանիշով առաջատարներն են Չեմպիոնների լիգայում:

Ընդհանուր առմամբ, Մբապեն Չեմպիոնների լիգայում գրանցել է չորս հեթ-տրիկ՝

2019 թ. հոկտեմբերի 22: «Բրյուգե» - ՊՍԺ - 0:5

2021 թ. փետրվարի 16: «Բարսելոնա» - ՊՍԺ - 1:4

2022 թ. փետրվարի 19: ՊՍԺ - «Մանչեսթեր Սիթի» - 3:1

2025 թ. սեպտեմբերի 30: «Կայրաթ» - «Ռեալ» - 0:5

Մբապեն 89 խաղում 58 անգամ է գրավել մրցակիցների դարպասը: Ըստ Transfermarkt պորտալի ընթացիկ տվյալների՝ ֆուտբոլիստի շուկայական արժեքը կազմում է 160 միլիոն եվրո:

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ Է

Միլանի «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը վերջերս կիսվել է իր մտքերով՝ նշելով, թե իր թիմակիցներից ում տաղանդն է ամենից շատ գնահատում:

Հայ ֆուտբոլիստը խոստովանել է, որ կցանկանար «վերցնել» իր թիմակից Մարկուս Թուրամի յուրահատուկ տեխնիկան:

«Կվերցնեի Մարկուս Թուրամի տեխնիկան. նա անչափ ուժեղ է եւ մեկ առ մեկ պայքարում ունի անհավանական հզորություն», - ասել է Մխիթարյանը:

ՊԱՐՏԻԱՆ՝ ՈՉ-ՈՔԻ

Լեւոն Արոնյանը շարունակում է ելույթները «Grand Chess tour»-ի եզրափակիչ մրցաշարում, որն ընթանում է Բրազիլիայում:

Ֆաբիանո Կարուանայի դեմ երկրորդ տուրում, որտեղ Արոնյանը խաղում էր սպիտակ խաղաքարերով, պարտիան կրկին ավարտվեց ոչ-ոքի՝ այս անգամ 26-րդ քայլին:

Արոնյանն ու Կարուանան մրցել էին նաեւ սեպտեմբերի 29-ին: Այդ պարտիան էլ ավարտվել էր ոչ-ոքի արդյունքով՝ 37-րդ քայլին:

Հաջորդիվ գրոսմայստերները կմրցեն արագ շախմատում, որը եւս բաղկացած է երկու տուրից: «Grand Chess tour»-ի եզրափակիչ մրցաշարը կավարտվի հոկտեմբերի 4-ին:

«Grand ձhess tour»-ի եզրափակիչ մրցաշարն անցկացվում է Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքում:

ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

ԿԻՐԱ ՆԱՅԹԼԻՆ ՉԻ ՎԵՐԱԴԱՌՆԱ «ԿԱՐԻԲՅԱՆԻ ԾՈՎԱՀԵՆՆԵՐԸ» ՖԻԼՄ

Կիրա Նայթլին հայտարարել է, որ չի պլանավորում վերադառնալ Էլիզաբեթ Սուոնի դերին «Կարիբյան ծովի ծովահենները» ֆրանշիզայում:

Դերասանուհին ասել է, որ նոր ֆիլմի շուրջ բանակցություններ չի վարում՝ կատակելով, որ նույնիսկ չի հիշում իր կերպարի պատմության ավարտը, ըստ New York Post-ի:

«Ի՞նչ պատահեց նրա հետ: Ես նույնիսկ չեմ հիշում, թե ինչ պատահեց: Այնպես որ, ես լիովին վստահ չեմ, թե որտեղ պետք է նա գնա հաջորդիվ: Կարծում եմ՝ նա պետք է ծովահեն լինի», - կիսվել է Նայթլին:

Դերասանուհին ընդգծել է, որ խոշոր նախագծերի նկարահանումները շատ էներգիա եւ ժամանակ են պահանջում, միաժամանակ սահմանափակելով ստեղծագործական ազատությունը: Նայթլիի որոշման վրա չեն ազդել ո՛չ Օռլանդո Բլումի՝ ֆիլմ վերադարձի կոչերը, ո՛չ էլ Ջոնի Դեփի՝ Ջեք Ճնչղուկի դերին վերադառնալու մասին լուրերը:

ՓԻ ԴԻԴԻԻՆ ՍՊԱՌՆՈՒՄ Է 11 ՏԱՐՎԱ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ

Դատախազները Նյու Յորքի դաշնային դատավորին կոչ են արել պրոդյուսեր Փի Դիդիին (իսկական անունը՝ Շոն Քոմբս) դատապարտել ավելի քան տասնմեկ տարվա ազատազրկման: Այս տեղեկությունը հայտնում է Associated Press-ը, փոխանցում է gazeta.ru լրատվամիջոցը:

Մեղադրող կողմը պնդում է 11 տարի 3 ամիս պատիժ սահմանել Կոմբսի կողմից մարմնավաճառություն եւ բռնություն կազմակերպելու համար:

Դատախազությունը վկայակոչում է մեղադրողներից մեկին, ով խոստովանում է, որ ապրում է վախի մեջ՝ երաժշտի հնարավոր ազատ արձակման ֆոնին:

Միջնորդության մեջ ընդգծվում է ռեփերի հանցագործությունների լրջությունը: Փաստաթղթում Կոմբսին անվանում են «չզղջացող»:

Փի Դիդիի պաշտպանությունը, ընդհակառակը, խնդրում է նշանակել առավելագույնը 14 ամիս ազատազրկում՝ վկայակոչելով այն փաստը, որ Քոմբսն արդեն ճաղերի հետեւում է անցկացրել գրեթե 13 ամիս:

● Հոկտեմբերի 3-ին՝ 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Համլետ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-6.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Գույքահարկի կիսամյակային հաշվարկը կոնկրետ ե՞րբ եւ ո՞ւր պետք է ներկայացնել:

Լիլիթ Ջուլհակյան
(34 տարեկան, հաշվապահ)

ՊԱՏԱՍԽԱՆ. Լ. Ջուլհակյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ է ղեկավարվել «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի դրույթներով, համաձայն որի՝ Գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձեւով գույքահարկի կիսամյակային հաշվարկը մինչեւ հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) սահմանված եղանակներով ներկայացնում են՝

1) հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի գույքահարկ վճարողներին հաշվառող մարմին (համայնք),

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով՝ իրենց գտնվելու վայրի գույքահարկ վճարողներին հաշվառող մարմին (համայնք):

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը համապատասխան բյուջե են վճարում մինչեւ հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ բացառությամբ հետեւյալ դեպքի, երբ ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների համար գույքահարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչեւ փոխադրամիջոցների՝ տվյալ տարվա տեխնիկական զննության ներկայացնելը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

ՀԱՐՑ. Ամուսնության ընթացքում ձեռք է բերվել անշարժ գույք, սակայն ամուսիններից մեկի անունը որպես համասեփականատեր սեփականության վկայականում չի նշվել: Ի՞նչ անել, որպեսզի գրանցման վկայականում նշվի նաեւ ամուսնու անունը:

Անի Գրիգորյան
(36 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ եթե ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած եւ նրանց համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի նկատմամբ գրանցվել է ամուսիններից միայն մեկի սեփականության իրավունքը այն հիմքով, որ իրավունքի գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում որպես իրավատեր նշված է եղել միայն ամուսիններից մեկը, ապա նման գրանցման գործողության ընթացքում, ամուսինների համատեղ դիմումի հիման վրա, այդ գույքի նկատմամբ կարող է գրանցվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը:

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համատեղ դիմումին կից պետք է ներկայացվի ամուսնության վկայականի բնօրինակը կամ սահմանված կարգով վավերացված պատճենը: Ամուսնության վկայականի բնօրինակը ներկայացնելու դեպքում դիմումն ընդունող աշխատակիցը այն պատճենահանում է եւ բնօրինակը վերադարձնում է դիմողներին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Shamshyan.com-ի

Աբովյան քաղաքի Երիտասարդական փողոցում ամիսներ շարունակ այս հակասանիտարական վիճակն է տիրում:

Արդեն մի քանի օր է քաղաքի հազարավոր բնակիչներ իրենց արդարացի դժգոհությունն ու զայրույթն են հայտնում «Վեոլիա ջուր» ընկերության հասցեին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 6 +12 + 17
Կոտայքի լեռներ	+ 2 + 4 +17 + 21
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 9 +15 + 19
Գեղարքունիք	+ 1 + 5 +16 + 19
Լոռի	+ 2 + 6 +16 + 19
Տավուշ	+ 4 + 12 +13 + 17
Արագածոտնի լեռներ	+ 2 + 4 +17 + 19
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 10 +18 + 22

Արարատ	+7 + 11 +20 + 24
Արմավիր	+ 6 + 10 +20 + 23
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +17 + 19
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 22
Սյունիքի հովիտներ	+ 9 + 13 +20 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 5 + 8 +18 + 21
ԼՂՀ	+ 9 + 12 +18 + 22
Երեւան	+11 + 13 +19 + 23

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.10.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*